ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սինորյան,

ի պատասխան Ձեր 13.12.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը 2024թ. հասարակական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովման նպատակով նվիրատվության պայմանագրեր է կնքել հետևյալ հասարակական կազմակերպությունների հետ /կոմունալ ծախսերի փոխհատուցման համար/.

- «ՍՈՐՍ» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ ՀՄԴ, որը սոցիալ-առողջապահական, վերականգնողական, կրթական ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ նպատակ ունենալով բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակը, նպաստել նրանց հմտությունների զարգացմանը, ինտեգրմանը հասարակական կյանքին և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը: Վերջինիս տրամադրվել է 761.335 ՀՀ դրամ կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Ծրագրի ավարտին կազմակերպության կողմից կներկայացվի հաշվետվություն, որը ներառելու է նաև կոմունալ ծախսերի հաշիվ-ապրանքագրեր:
- «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն, որը մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող շուրջ 60 դեռահասների և երիտասարդների մատուցում է ցերեկային խնամքի, սոցիալ-վերականգնողական և առօրյան կազմակերպող ծառայություններ /բազմամասնագիտական թիմի կողմից մատուցվող ծառայություններ, արվեստի խմբակներ, էքսկուրսիաներ, սնունդ/, ինչը հնարավորություն է տալիս նրանց ծնողներին աշխատել և հոգալ ընտանիքի սոցիալական խնդիրները: Կենտրոնի գործունեությունը նպաստում է նաև հատուկ տիպի հաստատությունների բեռնաթափմանը և հնարավորություն է ընձեռում նրանց ապրել իրենց ընտանիքում: Վերջինիս, 2023թ.-ի դեկտեմբերից մինչ 2024թ. հոկտեմբեր ամիսը նվիրատվության պայմանագրերով, տրամադրվել է 1.216.818 ՀՀ դրամ՝ կոմունալ ծախսերի /գազ, ջուր, կապի ծառայություններ/ փոխհատուցման նպատակով: Գումարի տրամադրման համար հիմք են հանդիսացել կազմակերպության կողմից ներկայացված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, «Վեոլիա

Ջուր» ՓԲԸ-ի և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի հաշիվ-ապրանքագրերը, որոնց հիման վրա կազմակերպության հետ յուրաքանչյուր ամիս կնքվել է նվիրատվության պայմանագիր:

• «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամ հասարակական կազմակերպությունը ՀՀ-ում միակ կենտրոնն է, որն իրականացնում է «Անօթևան անձանց կացարանով ապահովում» ծրագիրը՝ մատուցելով անօթևան անձանց խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ՝ թվով 100 շահառուների համար: Վերջինիս, 2023թ.-ի դեկտեմբերից մինչ 2024թ. հոկտեմբեր ամիսը նվիրատվության պայմանագրերով տրամադրվել է 6.967.176 ՀՀ դրամ՝ կոմունալ ծախսերի /գազ, էլեկտրաէներգիա, ջուր/ փոխհատուցման նպատակով: Գումարի տրամադրման համար ևս հիմք են հանդիսացել կազմակերպության կողմից ներկայացված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, ՀԵՑ ՓԲԸ-ի հաշիվ-ապրանքագրերը, որոնց հիման վրա յուրաքանչյուր ամիս կնքվել է նվիրատվության պայմանագիր:

• «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն, որը սոցիալ-հոգեբանական, իրավական, ուսուցողական և վերականգնողական ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաներին՝ իրականացնելով տարաբնույթ ծրագրեր: Միաժամանակ տեղեկացվում է, որ «Լիարժեք կյանք» ՀԿ-ն Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի մասնաճյուղում 2010 թվականից կազմակերպում է ամառային ներառական ճամբար: Հասարակական կազմակերպությանը կոմունալ ծախսերի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 185.014 ՀՀ դրամ: Ծրագրի ավարտին կազմակերպության կողմից ներկայացվելու է հաշվետվություն՝ այդ թվում կոմունալ ծախսերի հաշիվ-ապրանքագրեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ